ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 824 - Ա

ԶԱՐԵՀ ՁՈՆ ՍԻՆԱՆՅԱՆԻՆ ԵՎ ԿԱՐԵՆ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, 29-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն և կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշումները՝

1. Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Ձոն Սինանյանին և Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի սփյուռքի ներուժի քարտեզագրման և ներգրավման վարչության պետ Կարեն Ավանեսյանին՝

1) 2026 թվականի սեպտեմբերի 2-5-ը ներառյալ գործուղել Լեհաստանի Հանրապետություն (Կատովիցե՝ սեպտեմբերի 2-5-ը, Զաբժե՝ սեպտեմբերի 3-ին, 4-ին և 5-ին)՝ Լեհաստանի 5-րդ հայկական փառատոնին և Հայ-լեհական բարեկամության պուրակի բացման արարողությանը, ինչպես նաև հայ համայնքներում

կազմակերպվող մշակութային միջոցառումներին մասնակցելու, տարբեր պաշտոնատար անձանց հետ աշխատանքային հանդիպումներ անցկացնելու և համագործակցության հետագա ուղիները քննարկելու նպատակով.

2) 2026 թվականի սեպտեմբերի 10-14-ը ներառյալ գործուղել Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ՝ սեպտեմբերի 10-14-ը, Ալֆորվիլ՝ սեպտեմբերի 10-ին, Լը Պլեսի-Ռոբանսոն՝ սեպտեմբերի 11-ին և 13-ին, Իսի-լե-Մուլինո՝ սեպտեմբերի 12-ին, Կլամար՝ սեպտեմբերի 12-ին, Սևր՝ սեպտեմբերի 13-ին)՝ «Իլ-դը-Ֆրանս շրջանի հայկական սփյուռք» (ODARIF) կազմակերպության պաշտոնական բացման արարողությանը, ինչպես նաև հայ համայնքներում կազմակերպվող մշակութային միջոցառումներին մասնակցելու, պաշտոնատար անձանց հետ աշխատանքային հանդիպումներ անցկացնելու և համագործակցության հետագա ուղիները քննարկելու նպատակով:

2. Ջարեհ Ջոն Սինանյանի և Կարեն Ավանեսյանի՝ Լեհաստանի Հանրապետություն և Ֆրանսիայի Հանրապետություն գործուղումների ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի «Հայաստան-սփյուռք գործակցության» ծրագրի «Աշխատանք սփյուռքի համայնքներում» միջոցառման արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարին՝ ապահովել յուրաքանչյուր գործուղումից վերադառնալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն ներկայացնելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

31.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ